



ԲԱԺԱՆՈ՞՞՞ ԱԳՐՈՒԹԻՒՆ

Շուրհիկի համար

Շուրհիկի	12 Ֆր.
Վեցամսեայ	6 "
Արտասահմանի համար Շուրհիկի	15 "
Վեցամսեայ	8 "
Կենտրոնի համար	
Շուրհիկի	3 ռուբլ.
Վեցամսեայ	1.50 "

ՎԱՆՔԻՆԻ ՎՃԱՐՆԷԼԻ

# ՇԱՐՎԱԹ

R. P. Kalemecarian, Mechitarian, Vienna (Austria)

Նստակ է գրասրահի  
 Վիեննայի Վ. 4  
 —  
 Кня на ВЪСТНИКЪ  
 «Шаржумъ»  
 Варна  
 Redaction du journal  
 «Charjoum»  
 Varna (Bulgarie)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ  
 ԵՐ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԻ ՉՈՐԻՔՇԱՐՔԻ ԵՒ ՇԱՐՎԱԹ ՕՐԵՐԸ

Իրանացի սուրբ աստված  
 Կ. իսկ վերջին երեսի համար  
 20 սանի, իսկ հ. երեսին  
 20 Օլի գեղջ կրչայ :

Վառնայի համար ձեռքի 10 սանիքի

## Ս. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

Գլխաւոր գործակալ

ՊՈՒԼԿԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵՆԷ ԵՐԱՇ-  
 ԽԱՆՈՐԵԱԼ ՍՕՖԻԱ ՔԱՂԱՔԻ ՎԻՃԱ-  
 ԿԱԶԱՆՈՒԹԵԱՆ ՏՈՄՍԵՐՈՒՆ :

Տոմսակ գնել փոփոգողները կրնան  
 իրեն գիմել :

Չար-Պորիս փողոց Վառնա

## ԶԵՎՈՅՑ

Պատիւ ունինք յայտարարելու թէ՛  
 Տիգրիս եւ Տիար Զօրեանցի հիմնադր-  
 կամ վարժարանը իր երկրորդ տարե-  
 շրջանը պիտի սկսի յառաջիկայ Սեպ-  
 տեմբեր 3 ին, այս անգամ բարձրա-  
 դասի երկուսն ախարկութեան մը  
 լայն ու մշակեալ ծրագրով. այնպէս  
 որ այս դպրոցին ելնող աշակերտները  
 պիտի կրնան պետական կրթնագրանե-  
 րէն ընդունուիլ, Վարժարանը ունի  
 նաեւ իր կանոնաւոր մանկապարտէ-  
 ղը :

Վարժարանի ուսուցչական խումբը  
 արդէն կազմուած է, որ իր մշակած  
 ծրագրի, իր ընդունած մանկավար-  
 ժական ուղղութեան եւ կազմակեր-  
 պութեան մասին հարկ եղած ծանո-  
 թութիւնները պիտի տայ հասարա-  
 կութեան, Սեպտեմբերի սկիզբները  
 մասնաւոր հրատարակութեամբ մը :

Իրենց զաւակները արձանագրել  
 առ ուղղոյ ծնողներէն կը խնդրուի  
 որ Օգոստոս 10 էն սկսած հաճին վար-  
 ժարանիս ուսուցիչներէն Տ. Կ. Պիոն-  
 եանի գիմել եւ անոր հետ բանակցիլ  
 պայմաններու մասին :

Ուրիշ քաղաքներէ եւս աշակերտ  
 կրնոյն յիշել. զանոնք պատուաւոր  
 ընտանիքներու մէջ սեղանորելու եւ  
 անոնց վարք ու բարքին վրայ հսկե-  
 լու հոգը ստանձնելով :

## ՈՒՍՈՒՆ ԶԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Հասցէ  
 G. Bionian Institutei — Philippople

## ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Sof. V. Snsmlkianցի եւ Ե. Թոփչեանցի  
 «Die sozial ökonomisch Türcei»  
 Հաւաքական աշխատութիւնը Հայ-  
 կական հարցի եւ ընդհանրապէս  
 Թուրքիայի մասին :  
 Գիմել 2 մարդ ճանաչարձամատով  
 գիմել Berlin, Verlagshandlung  
 R. Prager, №W. 7

## ՀԱՍԻՏԱԿԱՆ ԿԵՂՇԻՔՆԵՐ

Պօլսէն հասած լուրերուն նա-  
 յելով, Սուլթանը առսակահն դե-  
 պան Զինովիէվի, շնորհած վեր-  
 ջին տեսակցութեան ատեն, ի  
 պատասխան Մակեդոնիոյ վար-  
 շական իշխանութեանց մէջ տի-  
 բող անկարգութեան մասին ըրած  
 գիտուցութեան, փորձեր է ինք-  
 չինքը պտասխանատուութենէ  
 ազատել վալիները ամբաստանե-  
 լով՝ որոնք իբր թէ չեն գործադ-  
 րեր եղեր իրեն հրամանները :

Չեմ գիտեր թէ ինչ կերպ ըն-  
 դունելութիւն գտան այս խօս-  
 խերը ուս դիւանագէտին կողմէ,  
 Բայց կերեւակայեմ որ պարզա-  
 պէս անձարակ դատած է զանոնք,  
 եթէ ոչ անպարկեշտ :

Առանց նկատելու որ ստորնա-  
 ցուցիչ բան մը կայ երկրի մը  
 պետին համար այս խոստովանու-  
 թեան մէջ, և ենթագրելով որ  
 արդարացումը անկեղծ եղած ըլ-  
 լայ և կուսակալները իրապէս չի  
 հնազանդած ըլլան իրենց տիրու-  
 տիրոջ, նորէն իրաւունք պիտի  
 ունենաք ըսել այս Սուլթանին  
 որ բանի մը չի ծառայելուն, լաւ  
 պիտի ընէր, եթէ ուրիշ մը թու-  
 զուր պետութեան գործերով զբա-  
 շելու հոգը :

Համիտ իր պատասխանը տուած  
 ատեն թերեւս մտքէն չի կրցաւ  
 անցնել թէ իր խօսքերուն տա-  
 կէն ասանկ իմաստ մը կելլէր,  
 բայց իր անկարողութեան այս  
 յայտարարութիւնը մեղապարտ  
 նկարութիւն մը կամ աններելի  
 անճարակութիւն մը ցուցնելու  
 անպատեհութեանը չունի միայն :  
 Ասկէ զատ մեծ անպարկեշտու-  
 թիւն մըն ալ է, որովհետեւ մէկն  
 է այն անհեթեթ սուտերէն որուն  
 վարժուած է վեհափառ խնդկատա  
 կը և որով կ'ջանայ միշտ ճշմար-  
 տութիւնը այլասերել ամէն թե-  
 րութիւն նախարարներուն վրայ  
 ձգելով :

Սակայն այս ողորմելի նախա-  
 րարներն ալ տեսնենք միշտ տրա-  
 մաբի՞ր են իբր քառութեան նու-  
 խալ հանդիսանալու իրենց տի-

բոյ, որ կուզէ ամէն ամբաստա-  
 նութենէ ճերմակերս ելլել :  
 Երբ գաւառ մը կայսրութենէն  
 կանչատուի, իսկոյն երկուրդի  
 մարդիկը ժողովրդին ըսել կու-  
 տան թէ միմիայն նախարարները  
 պատասխանատու են : Երբ դիւ-  
 նագիտական խոշոր սիւալ մը կը  
 գործուի, գետպաններուն կը պա-  
 տասխանուի որ, Սուլթանը ան-  
 ցած դարձածին անտեղեակ էր :  
 Ի հարկին Համիտ նոյնիսկ կանխա-  
 պէս կորոչէ թէ ապագային ո՞ր  
 փաշան յանցապարտ պիտի ներ-  
 կայացուի, եթէ իր մէկ ըրածին  
 համար խնդիր մը ծագի : Յա-  
 ճախ մինչեւ իսկ առերեւոյթս  
 շնորհազուրկ կընէ կարծեցեալ  
 յանցաւորը, իսկ զազանի գո-  
 հացում կուտայ անոր կամ դրա-  
 մական նուէրներով, կամ ըն-  
 դարձակ կալուածներ շնորհելով  
 և կամ այս տեսակ ուրիշ վար-  
 ձատրութիւններով :

Ետ չկայ զեռ, անցեալները  
 փութերու ինդրին մէջ ատանկ  
 բանի մը հանդիպեցանք : Երբ  
 Սուլթանը, գետպաններու գրեթէ  
 յճակաւ ընթացքին առջեւ  
 ստիպուեցաւ տեղի ալ առանց  
 ուէ շրջմանք գտնելու, գետ-  
 պաններուն լուր զրկեց որ շատ  
 ցուրտ զգացած է խարուած ըլլա-  
 լուն համար իլզէթ պէյէ մը որ  
 չինքը իրաց անգիտակ թույլ-  
 ցած էր, և հետեւեալ միակ  
 պատասխանատուն էր կըսանե-  
 բուն : Սուլթանին այդ սիրելին  
 նոյնիսկ վայրկեան մը երեսէ ին-  
 կած ենթագրուեցաւ : Այս աստի-  
 ճան կեղծաւորութեան հասնելու  
 համար, պէտք է իսկուպէս վար-  
 պետի կարգ անցած ըլլայ իր  
 անձին ստորնութիւնը և տիեզե-  
 րական ցածութիւնը շահագոր-  
 ձելու արհեստին մէջ :

Բայց եթէ Սուլթանը իր նա-  
 խարարներուն արժանապատու-  
 թիւնով շատ չի հետաքրքրուի  
 անոնք ալ, ի հարկին տակասովը  
 կը փոխարինեն իրենց անար-  
 գանքները : Այ միայն անոր վրան  
 կը ինձան, այլ նաև յարմար  
 պարագային զայն կը մտնեն ար-  
 վարդ մը, որ ներկայ գտնուած  
 էր կիցեօմի Սուրբայ սոյցելու :

Թեան ատեն, երկրին կուսակալ  
 տխուհոյշակ նազըմ փաշայի հետ  
 ունեցած երկրորդ տեսակցու-  
 թեան, մեզի պատմեց որ, կիյ-  
 եում Բ. այս սիրունիկ մարդուն  
 հարցուցած ըլլալով թէ ո՞վ էր  
 ջարդերուն ճշմարիտ յանցաւորը,  
 նազըմ ատանց վարանելու պա-  
 տասխաներ է :

— Բայց նոյն իսկ Սուլթանը :  
 Սուլթան Համիտի այս զգուշի  
 մեղաակցին վկայութեան պէտք  
 չունինք գիտնալու համար Հայ-  
 կական ջարդերուն բուն հեղինա-  
 կը, բայց այս խօսքը իր կարե-  
 ւորութիւնն ունի Սուլթանին ա-  
 մենէն աւելի նախընտրած արա-  
 րածէն ու գահճէն բղխելուն հա-  
 մար :

Այս կարգի վկայութեանց հա-  
 մար, մենք աւելի վստահելի ան-  
 ձեր ունինք : Մարդ մը, որուն  
 անկեղծութեան չէ կտրելի տա-  
 րակուսիլ, հետեւելը կը պատմէ :  
 1894 ի վերջերը, երբ որ մը  
 Սուլթանին սենեկապետ Հաճի  
 Ալի պէյի «սաիրէն» կը գտնու-  
 էի, որ եկած էր նաև Վանի  
 նորընտիր կուսակալը իր պաշ-  
 տօնատեղին մեկնելուն առթիւ  
 Սուլթանէն հրահանգներ ստա-  
 նալու, մեծ եղարքոս ձէվատ  
 փաշան յանկարծ աճապարանքով  
 ներս մտաւ, և առանց իրեն ան-  
 հաճոյ մարդ մը գտնուելուն ու-  
 շաղրութիւն գայձնելու, բարձ-  
 րաձայն ըսաւ :

— Փաշա, Սուլթանը ձեզի կի-  
 մացնէ որ Հայերուն հետ վերջին  
 ծայր խոստութեամբ պէտք է վա-  
 բուի :

Եւ երբ ձերուկ փաշան կը  
 փորձէր հասկցնել որ, բռնու-  
 թիւնը ոչ մէկ լաւ արգիւնք չէր  
 կրնար տալ :

— Կը կրկնեմ Սուլթանին հրա-  
 մանը, պատասխանեց ձէվատ,  
 իր բառերուն վրայ շեշտելով :

— Բայց, ստով մարդիկը ա-  
 պտամբութեան մղած կըլլանք :

— Եթէ ապտամբին, այն ա-  
 տեն կը ջարդէք... Այս պատկ  
 խօսակցութեան քով գրէք հի-  
 մայ Համիտի բողոքները, զոյս  
 ուղղեց Հայաստանի ջարդերուն  
 յաջորդ օրն իսկ, երբու՞մ պս-

տառ ըլլալով յսնուն Մուհամմէտի թէ կատարելապէս անմեղ էր ինք այդ գործերուն մէջ, եւ այն ատեն ճիշդ գաղափար մը պիտի կազմէր բարոյական արժէքին վրայ այն արեւնառու շտանգիտակցին, որուն մեղսակից կըլլայ եւրոպան ալ իր անբացատրելի տկարութեամբ:

Բրո Արմենիա

ժ. ՏՕՐԻՍ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԷՏԻՐՆԷ. 6 Յուլիս

Շատ մը ազգայիններու զարմանքը գրաւած է, թէ ի՞նչու համար էտիրէի հայերը այսօր քան անտարբեր են ազգային ունեւէ խնդրի մը մասին, եւ թէ ի՞նչու անորմէն խաւերուն մէջ տիրած է այդքան թրքասիրութիւն. ատոր պատճառը լաւ եկեղեցականներէ եւ լաւ ուսուցիչներէ զուրկ մնացած ըլլալն է:

Էտիրէն շատ տարիներ է որ դադարած է լաւ բեմ ունենալէ: Անոր սրտին ծանրացած են նախ Սուրիասեաններ եւ ապա Արսէն Գեորգիաններ, որոնք հայերէն բառ մը իսկ չէին համարձակեր հանել բերաննուն, վախճալով որ մի գուցէ իրենց տիրոջ դէմ անհնազանդութեան նշան ցոյց տուած ըլլան: Կը խօսին այն զուտ հայկական բեմէն շան լեզուով, շան հոգեով եւ շան մաղթանքներով: Սկիզբէն մինչեւ վերջ մաղթանքներ կըրնեն, ազօթքներ կըսեն այն դահիճին որ 300,000 հայու արիւնը խմեց

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ի. ՎԱԶՈՎ

ՈՉ ԿՐԻՂՆԱՆ, ՈՉ ԿՐ ՍԻՐԵՆ

XI

(Շար. նախորդ թիւին)

Սօֆիաի գիւղացիները, ուր Լէվսքի եռանդով կ'օմբակներ կը կազմէր անգամ մը հարցուցին իրեն.

— Եղբայր Վասիլ, երբոր Պուլկարիա ազատուի ո՞վ թագաւոր պիտի դնենք:

— Եթէ թուրքերու հետ միայն թագաւորի համար կը կուտինք, գիտցէ՞ք որ ապուշներ ենք, որովհետեւ հիմա արդէն Սուլթան մը ունինք. մեզի թագաւոր պէտք չէ, այլ մարդկային հաւասարութիւն ու ազատութիւն, պատասխանեց Լէվսքին խոփուած:

Ան ատեն ի՞նչ պաշտօն պիտի ստանաս... որովհետեւ քեզի առաջին պաշտօնը կիյնայ:

— Ոչ մէկ պաշտօն: Ուրիշ գերուած ազգերու մէջ պիտի երթամ հոս

եւ կը խմէ տակաւին. այն պաշտական դազանին, որ կը բռնաբարէ մեր քոյրերը, այն վայրենիին որ կաշխատի ոչնչացնել հայութիւնը: Ի՞նչ կսպասէք որ սորվի ժողովուրդը, երբ իր բեմէն տարիներով շարունակ այսպէս քարոզներ կը լսէ, երբ փոխանակ անէ՞ծքի, փոխանակ արհամարհանքի, կեանք եւ բարիք կը մաղթուի մեր եղբայրներուն դահճին:

Սակայն լաւ թող համոզուին այդ Արսէնները թէ վատ մարդք երբէք չէ կարող այդ կերպով հաճելի ըլլալ նոյն իսկ այն մարդուն, որուն կուզէ հաճելի թուիլ. ամենէն վատն իսկ կատէ շոքոքորթը: Թող համոզուին թէ պիտի գան դարձեալ անցեալին դառն օրերը, պիտի կրկնուին 95 ի սարսափները, եւ այս անգամ աւելի ահաւելի եւ վերջնական կերպով: Չեմ յուսար թէ նորէն էտիրէնցիները զերծ մնայ այդ քամիէն:

Մենք մեզի ճանչնանք, չի զստուինք իրարմէ եւ պատրաստ ըլլանք այդ ահաւոր օրին:

Առաջին անգամն էր որ էտիրէնցիները կը լսէր, անցեալները այցելող Արթ. Տ. Մ. ի բերանէն, հայ հոգեով, հայ լեզուով եւ հայ սրտով քարոզ մը: Երբէք էտիրէնցի եկեղեցին այնքան բազմութիւն տեսած չէր, նոյն իսկ Ձատկի օրերը: Առաջին անգամն էր որ կը լսուէր Ա. Պօլոտի բեմէն դճմարիտ հայեր ըլլանք, զուտ հայկական կրթութեամբ կրթներք մեր մանուկները օտար կրթութեամբ սնած մանուկը երբէք չէ կարող օգուտ հասցնել

հիմակուան կատարածս, հոն ալ ընելու:

Եւ Լէվսքի անկեղծութեամբ կը խօսէր:

Սարկաւազը՝ կեանքը վտանգի ենթարկելու. չափ աներկիւզ էր: Եւ մշտակայ վառանդները, որոնց մէջ տարիներով ապրած էր, իրեն սովորական բան էր, ուր ինքզինքը աւելի առողջ կզգար եւ ուրիշ նոր ինքնավստահութիւն մը կը քաղէր, զօրապիտի մը պէս, որ իր ակաւջին մօտէն սուրջ գնդակներու անգորք Ֆշշոցը լսելու կը վարժուի: Անգամ մը Սոբօթ (՝), վարժապետին սինեակը գաղտնի յեղափոխական ժողով կար: Իսկոյն հիւր մը կերեւայ թուրք լըրտես ճանչցուած, եւ կը նստի: Ինչ որն ալ մէկէն կը լսեն, բայց հիւրը չի հեռանար, Լէվսքին կը բորբոքի, կեւայն եւ ատ զզուելի արարածին երեսին ապտակ մը կը փակցունէ, եւ կը գոռայ:

— Դ՛ո՛ւրս, լիբր:

— Ի՞նչ, ի՞նչ իրաւունքով կը

(\*) Սօբօթ գիւղացիները վաղովի ծննդավայրն է եւ Գարլովայէն 1/2 ժամ հեռու է: Գարլովան Լէվսքի ծննդավայրն է, Ծիլիպէէն 50 քիլօմ. հեռու երկուքն ալ Պալքանի ստորոտը:

մեզ՝ խօսքերը. ճշմարիտ եւ անկեղծ խօսքեր, ժողովրդի ամենէն տգէտ խաւն իսկ հասկցաւ քարոզի իմաստը:

Մաղթանքներ եղան հայ հասարակութեան եւ հայ ազգային մարմիններու համար միայն: Ասիկայ տիպար քարոզիչ մըն էր մեզի համար:

Ինչ մըն ալ այս կողմերը անցած դարձաներուն մասին գրեմ. Այս ամսոյս սկիզբները տեղույս հայ ձուլիչներէն միոյն աշակերտը, հին երկաթները գատելու պահուն, պատահմամբ լեցուն փանփուշտ մը, որ անոնց մէջ խառնուել էր կը պայթի, եւ կը վիրաւորէ տղուն ձեռքը. ոստիկանութիւնը վրայ կը հասնի կը խուշարկէ խանութը եւ տունը եւ կը ձերբակալէ վարպետը:

Յուլիս 5 ին, կէս գիշերուն, Սալոնիկէն եկող թրքէնով կ'իւժիւրճինայի կողմէն 31 պուլկար եւ երկու քահանայ շղթայակապ տեղույս բանտը բերին իբր քաղաքական յանցաւոր:

Ամսոյս 6 ին, տեղույս մեծահարուստ տաճիկներէն Տէրտի Մուսթաֆա պէյի տղան իր ագարակէն գողերէ կը գողցուի, սակայն 3 վաշտ զինուոր եւ բաւական թուով ոստիկաններ անմիջապէս կը հասնին. երկու կողմէն ալ հրացանաձգութիւններ բաւական երկար կը տեսնեն. գողերէն 5-6 հոգի եւ զինուորներէն բաւական թուով սպաննուածներ եւ վիրաւորուածներ կան. արդիւնքը այն կըլլայ որ տղան կազատեն երկու տեղէն վիրաւորուած եւ քիչ վերջը կը սատկի: Մեռնելէ

զարնէք, կըսէ պարոնը շուարած:

— Դ՛ո՛ւրս, գնա՛ մեզ թուրքերուն մասնէ: Ես եմ Լէվսքին:

Աս խօսքերուն վրայ ամբողջ ժողովը ստիկաններ կը դողայ:

— Մի վախնաք կըսէ հանդարտութեամբ, երբոր հիւրը դուրս կելլէր— եւ հաւատացած եմ որ ատ անպիտանը բան մը ընելու համարձակութիւն չունի:

Եւ իրենց վիճարանութիւնը շարունակեցին:

Մեկն ալ չեկաւ զանոնք անհանգստացնելու:

Բոլոր այդ գիւղացիները կը յիշեն թէ ի՞նչ անհաւատալի հանդէպնութիւն ցցուց ու անձը վտանգի ենթարկեց, իր բաճկոնը որուն մէջ քանի մը յեղափոխական յայտարարութիւններ, մոմէ կնիք կեղծ անցագրերներ, թոյն եւ իր թղթապանակը կը գտնուէր, ոստիկանութեան ձեռքը ինկաւ: Իշխանութիւնը գոյն աւմէն քարի տակ կը փնտռէր. գինուած ոստիկանները փողոցները կը վխտային: Իսկ Լէվսքին գիւղացիի հագուստով, իր ձախ աչքին վրայ ազուէսի մարթի կտոր մը կախած, բարանաբաց միամտօրէն կը նայէր ոստիկանութեան եւ անցորդներուն կը հարցնէր «բժիշկը ո՞ւր կը կենայ»: Լէվսքին թէ Գալէշքովի խանդա-

առաջ պատմած է թէ այդ աւազակները յեղափոխականի աւելի կը նմանէին քան աւազակի, եւ ամէն մարդագլուխ 300 ական փամփուշտ ունին եղեր, թուով 8-10 հոգիի չափ են եղեր միայն, ասոնցմէ երեքը ձերբակալուել են որոնց մին հայ մըն է եղեր Օննիկ անունով, զարմանալի արագութեամբ զէնք կը պարպէ եղեր այդ Օննիկը եւ շատ զինուորներ սպաննել է:

ՇԱՀԷՆ

Թ. ԲԱԶԱՐՃՐԻ, 12 Յուլիս

Վերջերս տեղական թերթի մը մէջ «Իրազէկ» ստորագրութեամբ իմ մասին հրատարակուած ստալոյդ գրութեան մը կուզամ հրապարակաւ պատասխանել:

Տեղույս Պատ. Թալ. խորհուրդը եւ հոգաբարձութիւնը մեծամասնութեան ձայնով ընտրուած եւ պատուաւոր ազգայիններ ըլլալով, իրենց պաշտօնավարութիւնը տեղույս հայրուն համար այնքան նպատաւոր եղած է որքան կը ներէր իրենց սղքատիկ պիտոճէն:

Արդ՝ այս պատուաւոր շեկավարները իրենց պաշտօնավարութեան միջոցին, երբեք մութ անցեալ ունեցող դատաւորներ վարձած չեն. եւ ոչ ալ եկեղեցիին մէջ շարքի, մանի կանչող երգիչներ քինչպէս կը գրէ «Իրազէկ»: Կը ցաւիմ որ Պ. «Իրազէկ» կը սրբապղծէ ճշմարտութիւնէ բուրոզովին շեղելով, այն եկեղեցիին որուն զաւակն է ինք ալ: Այդ պարոնը կրնա՞; գոնէ փայտէ մարդ մը ցուցնել որ մէկ անգամ լսած ըլլայ եկեղեցույն մէջ շար-

վառութեան, թէ Պէնքովսքիի հաստատութեան եւ թէ Գարաճիկ կորովէն բան մը իւրացուցած էր: Բայց ինք առանցնայատուկ բան մը ունէր որ ուրիշներու վրայ չէր երեւեր: Անսղթիկի համարութիւն ու յարատեւութիւն: Գալէշքով. Պէնքովսքի ու Գարաճա մեր երկնքի մթնոլորտներ մէջ յանկարծակի «մթնօրներու» պէս ցուրտփայլեցան, հոգիները խուղեցին ու ցնցեցին ու յետոյ մարեցան: Կարծես այս մարդիկը եկան պատմութեան մէջ մեծ անուն մը գնելու. ու երթալու: Լէվսքիի ասպարէզը աւելի լայն, աւելի տեսական եւ աղիւրնաբեր էր: Ծակատագրի կամայականութիւնը այնպէս ուզեց որ թուրք հասարակ քեազիպ մը ու հազիւ գրել կարողալ քիտցող սարկաւազ մը, ամբողջ աշխարհին ցոյց տայ թէ վե՛ գաղափարի օգեւորութիւնը ինչք՞ կրնայ կատարել, Լէվսքին գաղափարի անձնաւորութիւն մըն էր. որովհետեւ սկեպտիկները ինչ որ ալ բան, Լէվսքին ահեղ զօրութեան մը արտայայտիչն եղաւ. անբող ստորնութիւններէն բխած: Եօթը տարի անգաբարձ Պուլկարիան շղթայակալ, հարիւրաւոր գիւղեր ու քաղաքներ այցելեց, կօմիտէներ կազմեց, սորվեցուց, քաշակերց, հարուստները անարեկեց:

քի կամ կազել երգուիլը: Ինք  
որ գպրոցը կը քննդասէ, ան-  
գամ մը այցելած է հոն, ներ-  
կայ գտնուած է հարցաքննու-  
թեանց: Զիս ճանչցողները կըր-  
նան իմ անցեալիս մասին պէտք  
եղած տեղեկութիւնները հարց-  
դել ո՞վ որ փափաքի: Ես իբր ե-  
կեղեցեւոյ պաշտօնեայ մը, գիտեմ  
բարձր պահել անոր ազդեցու-  
թիւնը: Թաղ. Խորհրդոյ որո-  
շումով առժամայէս եկեղեցեւոյ  
բակը կը մնամ, բայց երբէք ոտ-  
նակոխ չեմ ըրած եկեղեցեւոյ պա-  
հանջած պայմանները: Ճշմար-  
տութիւնը կարելի է ստուգել  
Տ. Ուղիւնէս քահանայէն, որուն  
հոս գտնուած ատեն եկեղեցեւոյ  
չըջափակը կը մնայի:

Պ. «Իրազէկ» փոխանակ անձ-  
նական գծու ճ հաշիւներէ միւլուած  
կեղծ անուններու տակ պահու-  
տելու, լաւ չէ՞ր ընել որ քանի  
մը մարդոց ներկայութեան պար-  
զէր իր փաստերը և բացատրու-  
թիւն պահանջեր ինէ: Բայց քա-  
նի որ Պ. «Իրազէկ» այդ համար-  
ձակութիւնը չունի, ես ընթեր-  
ցողին կը թողում խորհիլ թէ՞  
քօղի տակէն ալք. պաշտօնեա-  
ները արատաւորող որքա՞ն ստա-  
խոս լուցած արարած մը կրնայ  
ըլլալ:

Ուսուցիչ Թ. Բագարճըքի  
Ազգ. վարժարանին  
Վաղարշ Գուգանեան

Ա Ձ Դ

Վառնայի երկսեռ Որբախնամ  
ընկերութեան հաւաքիչ ըլլալու  
փափաքողները թող գիտնն գործ.  
ժողովոյն:

Վարդ. Որբախնամ

ուսումնականները յանդիմանաց թուր-  
քերը սաստեց, յարատեւ մինչև վեր-  
ջին կարելութիւնը, յամառ ու դի-  
մադրող մինչև անխելութեան սա-  
տիճանը, իշխանութիւնները զայն  
հետապնդելէ յոգնեցան: Իոկ Լէվսքի  
անոնց դէմը ելնելու չի յոգնեցաւ,  
խոչնդոտներուն ու արգելքներուն  
դիմադրեց, անհաւատները համոզեց,  
քննադոշները ցնցեց, վառեց, միայն  
զաւսանողութեան մը դէմ անզօր մնաց:  
Աստուծոյ պաշտօնեայ մը, Լօվչայի  
նրխաթօ քահանան զայն մատնեց:  
Անգամ մը բռնաւորներու ճանկը  
իշխալով երկու գնդակներով վիրա-  
ւորուած, ինչպէս կըսեն, թոյն ա-  
ւեր է, իր երգման հաւատարիմ միա-  
լու համար: Բայց թոյնը չազդելով  
Սօֆիայի մտայ բանտերու պատին  
զարկեր է զլուխը, Բայց քարն ալ  
անզօր գտնուեցաւ իր առջեւ, ու կի-  
սամեա կախազան հանուեցաւ:

Ահա այս էր սարկաւազ Վասիլ  
Լէվսքի, առաքելալ անուններու տակ  
ճանչցուած մարդը, որ դիւցազն  
մըն էր, եւ զոր ձակատագիրը զԵՐ-  
կած էր ազատութեան քարոզիչներու  
ու մարտիրոսներու գլուխը անցնելու  
ամփոխի հոծ գանգուածը շարժելու ու  
ցնցելու, դէպքերը ու արկածները  
փուցացնելու ու ապագան ստեղծելու  
համար...

ՎԵՐՋԱՑՈՂ ՇՐՋԱՆԷՆ ՆՕԹԵՐ

Ամառնային եղանակին մէջ, ուր  
վարժարաններու հետ նաեւ Ֆիլիպպի  
հայ երիտասարդութեան աշխատող  
նուսիրներն ալ իրենց կարգին կարճ  
զազարով մը փակած են այս շրջանը,  
չէ կարելի ստանց հրճուելու շանդ-  
րագոնալ կամ չվերջիլել, վերջին  
անգամ մը գոնէ, այն գովելի և օգ-  
տակար քայլերը զոր, առին անոնք:

Վերջացող շրջանին սկիզբներն էր  
որ տեղւոյն գործելու արամադիր ե-  
րթասարդութիւնը մեծ ջանքերով,  
հակառակ ամէն նիւթական արգելք-  
ներու, կազմեց «Հայկակաւ» երգե-  
ցիկ խումբ մը, որ իր գոյութիւնովը  
ամենազգալի պակաս մը եկաւ լեցնել,  
եւ քանի մը ամսուան ժամանակա-  
միջոցին մէջ բաւական ալ յառաջա-  
դիմութիւն ցոյց տուաւ:

Քիչ ատենէն երգեցիկ խումբը ու-  
նեցաւ իրեն զօրավիզ նոյնքան կա-  
րեւոր ուրիշ խումբ մըն ալ, օրիորդ  
ներու երգեցիկ խումբը որուն սոր-  
վեցնելու զոհողութիւնը ստանձնեց  
Տիկ. Բեբրոնէ Ա. Թամիրեանց:

Ակնարկուած երիտասարդներուն  
կարեւոր մէկ մասին մէջ թատերա-  
կան հոսանք մըն ալ սկսաւ առաջ  
գալ, անոնք ներկայացումներ տալու  
ջանք մըն ալ ուղեցին ընել, թէեւ  
անոնցմէ ոչ մէկը բեմ ելած էր:

Ամբողջ տարի մը, այս խումբերը  
գիշերը ցերեկին խառնեցին, գործեր-  
նին զոհեցին եւ աշխատեցան միշտ  
առաջադիմած նպատակներ իրագործե-  
լու համար, զոհողութեան հետ յա-  
րատելութեան ալ էն՝ գեղեցիկ օրի-  
նակը տալով մեզի:

Ու շնորհիւ այս ամենուն, այդ շրջ-  
անին մէջ ունեցանք ամենէն գեղե-  
ցիկ ու շքեղ երեկոյթներն ու ներ-  
կայացումները՝ որոնց նմանը դրեթի  
տեղի չէր ունեցած Ֆիլիպպի մէջ: «Ա-  
նիի Առումը» որ այնքան շքեղօրէն  
ներկայացուց թատերասէր երիտա-  
սարդներու խումբը, արդէն համակ-  
րանքի մեծ բաժին մը շահեցուց ի-

Փոքրիկ Հիւս մը, որ տիտան մը  
չեղաւ, որովհետեւ շրջանակը նեղ էր,  
որ Յուզայի երկրին մէջ պիտի խաչ-  
ուէր, եւ միջին դարուն կենդանի պի-  
տի այրուէր, ինչպէս որ տասնիւնըն-  
երորդ դարու մէջ կախուեցաւ: Երեք  
տանջարաններ եւ երեք նշանաբան,  
խաչելը, հաւատաքննութեան կրակը  
եւ կախազան զոր դարերը հնարեցին  
անպատիւները ու անմահները պատ-  
ժելու համար:

XII

- Հաճի, կենացդ .
- Խմի՛, Աստուծով .
- Կենացդ բարի յաջողութիւն .
- Վի՛վա, տղանի կիբա, գաւաթ-  
ները լաւ լեցուր, չունե՛րը գլուխդ  
կուտեն .
- Վի՛վա, — Ապրի՛նք, — կե-  
նացնուց, գոչեցին քանի մը հոգի-  
ներ, գաւաթները ուժով իբար զար-  
կին, եւ պարպելով սեղանի վրայ  
դրին աղմուկով: Հայրուկները պե-  
խերնին սրբեցին .
- Հապա Գարանիվը ո՞ւր է, Հա-  
ճի՛, անոնք չի կանչեցիր .
- Պէտքովսքին գնաց իր հաշիւ-  
ները նիւթուէսքին հետ տեսնելու . . .  
առ գիշեր հա է: Ես առ Պալքանի

րենց: Քիչ մը ետքը այդ համակ-  
րանքը կրկնապատկուեցաւ եւ ամրա-  
պնդեցաւ Դանիակցութեան «Տասնամ-  
եակ»ի առիթով տեղի ունեցած այն  
փառաւոր հանդէսին շնորհիւ, որ  
այնքան բուն խանդավառութեամբ  
ու ոգեւորութեամբ կատարուեցաւ,  
որ վերջապէս քանի մը շաբաթ ա-  
ռաջ ի նպաստ «Բրօ Արմէնիա»ի  
տրուած հանդէսը — նախորդները գե-  
րագանգիլու աստիճան շքեղ — ուր եր-  
գեցիկ խումբ մը եւ «Նէլիս-ձէլայէս-  
տին»ը ներկայացնող թատերասէրնե-  
րը արտակարգ յաջողութիւն ցոյց  
տուին հիացում պատճառելով ներկա-  
ներուն:

Իսկ այս առիթներով գաղափարա-  
կան այն գեղեցիկ եւ միտքարական  
հոսանքը որ առաջ եկաւ այս տարի  
Ֆիլիպպի շաբաթ մը ազնիւ օրիորդնե-  
րու մէջ՝ չէր կարելի իրացումով չի գի-  
տել ու արձանագրել: Երգեցիկ  
խումբին գոյութիւն տալէ ետքը,  
անոնք փութացին մասնակցիլ տեղի  
ուսնեցած հանդէսներուն կամ ներկա-  
յացումներուն, մասնաւորապէս այս  
վերջինին մէջ, ստանալու ընելով առ  
մասին մեր հասարակութեան մէջ տի-  
լող ըմբռնումները եւ խճճանքները  
միեւնոյն ատեն իրենց այս օրինակե-  
լի քայլովը լաւ գաղափար մը կազ-  
մել տալով մեզի իրենց ըմբռնումնե-  
րուն ու գաղափարական մակարդակին  
վրայ: Ու մտածել թէ որքան յաջո-  
ղութիւն եւ բնորոշակութիւն ցոյց  
տուին եւ հանդիսականներուն մեծ  
մասին արտասուքները վազցուցին,  
Գաղափար մը տալու համար հանդի-  
սականներու զոհունակութեան վրայ,  
ըսեմ որ ներկայացումներէն ետքը  
չատերու կողմէ միշտ փափաք յայտ-  
նուած է յաճախ մեր ներկայ կեան-  
քէն առնուած թատերադրութիւններ  
ներկայացնել, որոնք էն՝ գործնական  
միջոցն են անշուշտ հայրենիքի սրբ-  
տաճակի վիճակը ժողովրդին աչքին  
տողել պարզելու եւ զանոնք քիչ մը  
սխալեցնելու համար:

Ֆիլիպպի երիտասարդներուն այս  
չըջանին մէջ առած քայլերը մեզ լաւ

արջը կը մոռնամ, Գարանիւն ալ պի-  
տի դայ, գնաց եղբորը մօտ, միտքին  
պիտի գան որովհետեւ եղբայրը բաւ-  
որ, խեղճ ենթը չառնէր. . . խանու-  
թը կրակի պիտի տայ եղեր. . . քաջը  
— Հապա կու՛նջօվ .

— Ան իր զէնքը ծախել է, ապու-  
շը . . .

Նետ գինքը երէկ ընտիր Վին-  
չէսթրո մը առաւ . . . պիտի գայ, ըսաւ  
երրորդ մը:

— Հապա՞, Բօքչէթօն, հարցուց  
չորրորդը:

— Նա Գիրջօի, Մըբօի եւ Գօյ-  
նօվի մօտ գացեր է, խեղճ Գօյնօվը  
հիւանդ է, շատ կը հազայ, բայց նո-  
րէն գալ կուզէ:

— Երբոր գործը առ տեսակ սուրբ  
բանի մը համար է, հիւանդութիւն  
չիկայ, յարեց մէկը:

Ոչ մէկ պատճառ կրնայ արգելել,  
պուրկոր քաջի մը իր հայրենիքի հա-  
մար մեռնելու, ըսաւ ուրիշ մը, խո-  
րագագ Գօյնիքօվի ողբերգութիւն-  
ներէն առջ մը վերջիլելով:

— Են որ պատճառաբանութիւն-  
ներով կը քաշուի, լիբը է, գաւա-  
ճան է:

— Եղբայրներ կենացնուց, կեցցէ՛ն  
կուսողները, պօռայ հայրուկ մը բո-  
մանական զինուորի բաճկուն հպած

յոյս ներշնչելէ եւ զրեթէ բովանդակ  
Ֆիլիպպի հայ հասարակութեան հա-  
մակրանքը վայելելէ դատ, էն գեղե-  
ցիկ օրինակն ալ եղան ապահովարար  
բոլոր Պուրկարիոյ աշխատելու տրա-  
մադիր երիտասարդութեան, Սրտանց  
կը ցանկամ որ, այս կարճ զազարէն  
ետքը, յառաջիկայ շրջանին աւելի  
թարմ ու կազդարարուած ուժերով  
վերակսին, վերջացող տարուէն ա-  
ւելի լայն գործունէութիւն մը ցոյց  
տան, եւ ալ աւելի գոհ ձգեն հաս-  
րակութիւնը, որ իր կարգին քաջա-  
լերութեան աւելի լայն բաժին մը կը  
պարտի անոնց անշուշտ:

Վերջացող այս շրջանին մէջ երկ-  
րորդ միտքարական երեւոյթը, ասե-  
ղացիք եւ «գրսեցի»ի պարսպ հա-  
կատակութեանց դուրիւն էր: Ուրա-  
խայի է որ շատ մը տեղացի եղբայր-  
ներ արդէն ցաւով դիտել ստուած են  
անցեալին մէջ պատահածները, որոնք  
պարզապէս զիրար չը հասկնայու եւ  
չարամիտ դրող մտերու արդիւնք ե-  
ղած են, եւ սակայն ամենէն տիրա-  
լի տպաւորութիւնները թողուցած են  
անոնք դիտողին մտքին մէջ, գրո-  
ղին գրչին տակ: Անցած հակառա-  
կութիւններու ոչնչութիւնը դժբաղ-  
դար կը հասկցուի շա՛տ ուշ, այն-  
քան ուշ երբ արդէն գաղթական տար-  
րին վարժարանին յառաջդիմութեան  
փափաքող մասը «արիւն ձեր ի գլուխ  
ձեր»ի պատուէրին համակերպելով ա-  
մէն բան իրենց ձգած է, եւ կատա-  
րելապէս ձեռնպահ մնացած է, տես-  
նելով որ իրենց աշխատութիւններն  
ու անկեղծ ջանքերը «նպատակաւոր  
ազատաներ»ու կողմէ կը խճճուին  
միամիտներուն առջեւ: Իսկ վարժա-  
րանին յառաջդիմութեան ձգտողնե-  
րուն ձեռնպահութեան արդիւնքը  
այսօր աչքի առջեւ է գոնէ . . .

ՆՐԱՆԴ-ԺԻՐԱՅԹ

(Մնացեալը յաջորդով)

պատուած ուսնողներով, կեցցէ՛ ազ-  
ղը . . . մահ լուսաւորներուն . . . կի-  
քա լեցուր գաւաթները, Տօղբէին ու  
Բէթթօին ալ . . .

— Կեցցէ՛:

— Թող ճաթին բունաւորները:

— Գիտե՞ք գոչեց Տիմիթրօն, Մրաւ-  
քան գարձեալ աղաւտեառներ մտեր է

— Այս ձմեռը անխելայ ութ անգամ  
նստեցուցած են յարեց Աստուծով, եւ  
միշտ ջնջին բաներու համար: Զոր-  
րինակ հրէայի մը հանդիպելուն պէս  
կըսելի անոր ծամերը քաշել, Հրէան  
կը ճջայ ոստիկանութիւնը կը տըն-  
կուի, եւ ուղղակի Գուրթօն Գուր-  
նիք (՛) կը տանին, կամ խանութի մը  
երկու խնձոր կը յափշտակէ ու կը  
փախչի, կը հալածեն, անձնատուր  
կըլլայ, եւ չուրանայ նորէն ոստի-  
կանութեան ձեռքը . . . Ասոնք գիտ-  
մամբ կընէ երբ ուտելիք չունենար:  
Բանտը լաւ կը կերակրեն:

Այս միջոցին Հաճին կամացուկ  
երկու հայրուկի հետ Մաքեասօնքի  
վրայօք կը խօսակցել, որ դեւ կու-  
շտար:

Թարգմ. Պ. ՍԻՐԷՄՃԵԱՆ  
(Շարունակելի)

(\*) Բոմաներէն բանտի հեգնական  
անունը:

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Հանգուցեալ Մկրտիչ Ստրեանի բարեկամ այն մշեցիները որոնք իզմիր կը բնակին, 20 ոսկիէ աւելի գումար մը հաւաքելով իրենց մէջ, շիրիմ մը կանգնեցնեն ողբացեալ ուսուցչին գերեզմանին վրայ:

— Յառաջիկայ սեպտեմբերին եպիսկոպոսական ձեռնադրութիւններ պիտի կատարուին էջմիածնի մէջ, Ներք թրքահայ և երեք կովկասցի վարդապետներ թիկնածու են եպիսկոպոսութեան: Էջմիածնի մէջ մնաւր է կաթողիկոսին թարգման բնիկ ճուշեցի Աւետիս Բէկ Գաբրիէլեան:

— Իր կրօնական ու սաստաւ ծարանական հրատարակութիւններով ծանօթ Արշակ Տէր Միքայէլեան 27 տարեկան հասակին մէջ մնաւր է: Հանգուցեալը Գէորգեան ճեմարանի փայլուն ընթերցարարներէն է և աւարտած է Նէնայի համալսարանը ստանալով փիլիսոփայութեան սոքթօրի աստիճան: 1892ին Գէորգեան ճեմարանին մէջ աստուածաբանութեան ուսուցիչ եղած է: Ետտ գրութիւններ ունի հայ եկեղեցիին վրայ, մեծ մասամբ գերմաներէն լեզուով և իր մահը ճշմարիտ կորուստ մըն է հայ գիտական աշխարհին համար:

— Սամսոնի Ազգ. վարժարանի մրցանակաբաշխութեան հանդէսին պահուն գայթակղեցուցիչ դէպք մը տեղի ունեցեր է: Բարձրագոյն կարգի քանի մը աշակերտներ հակառակ հոգաբարձութեան պատուէրներուն, քանի մը քննութիւններէ բացակայ գրանուելուն համար հոգաբարձութիւնը իբր պատիժ որոշեր է Բ. մրցանակ տալ անոնց երբ Ա. արժանի են, և բաշխման նատեն այդպէս ալ յայտարարեր է: Այս բժոքստ տղաներէն մին, երբ վկայական կը տրուէր, զայն բոլոր հանդիսականներուն առջեւ պատառ պատառ ըրեր է: Բոլոր հոգաբարձութիւնը, ուսուցիչները, գունատ, շփոթած, շին համարձակեր իսկ խօսելու, զգալով որ ամբողջ իրենց բարոյական հեղինակութիւնը շարձախառած է այլ եւս: Հոգաբարձութեան մէկը սակայն սիրտ կունենայ բնական յայտարարելու թէ վարժարանը այդ վայրկեանէն սկսեալ այլեւս աշակերտ չի պիտի ճանչնայ այդ բժոքստ տղան: Իսկոյն տղուն մայրը մէջ կը մրտնայ «գուք արգէն տղուս հակառակ էք» սյոտալով:

Չենք գիտեր թէ ի՞նչ էր աշակերտներու և ուսուցիչներու մէջ տիրող հակառակութեան պատճառը, բայց գիտենք որ տղուն մօրը այդ անհամ միջամտութիւնը շատ անպատեհ էր և

պատճառ կըլլար իր աղուն գատապարտութեան. նոյն իսկ եթէ արդարացի էր իր ընթացքը:

— Ղշկանց կրթարանի վիճակացոյցներու բաշխման հանդէսը պիտի կատարուի յառաջիկայ կիրակի, 22 յուլիս, ժամը մէկին «Սաեւորենիէ»ի սրահին մէջ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

«Նայէ ֆրայէ Բրէսէնի Վիէնական թղթակիցը հետեւեալ մանրամասնութիւնները կը հաղորդէ Նէրիֆ փաշայի ձերբակալման վրայ, որ այնքան յուզում յուսալ բերած է:

Նէրիֆ փաշայ իր 26 հրաւիրեալներով ձերբակալուած է թուրք հետեւակազորներու վաշտի մը ձեռքով, յուլիս 11ին Օրթաքէօյի իր պալատին մէջ:

Բոլոր ձերբակալուածները շղթախկապ բանտ առաջնորդութեան, փաշան և իր բարեկամները որոնք մեծ մասամբ թուրք բարձրաստիճան պաշտօնեաներ են, ամբաստանուած են իբրև մեղսակիցներ Սուլթանին կեանքին դէմ սարքուած դաւադրութեան մը:

Նէրիֆ փաշան եղիպտոսի Խըտրվին ազգականներէն է:

— Մ. Ի. Միխայիլովիչի Պօլիս այցելութեան առթիւ թէև շատ իրարմէ տարբեր տարածայնութիւններ եղած են, բայց ստուգութիւնը աս է որ, կը գրէ «Թան», Սուլթանը մեծ իշխանին իր մէկ հարկատու ճորտը եղող Պուլկարիս այցելութենէն չափազանց նեղուած, անպատճառ զայն Պոլսոյ մէջ ալ տեսելու զամ էր, և մեծ իշխանը լոկ քաղաքավարական պարտականութիւն մը կատարեց Պօլիս երթալով:

— Անցեալ ուրբաթէն ի վեր ժամտախտի երկու նոր դէպքեր պատահած են: Գումարը 12 դէպք և 2 մահ է:

— Թուրք կառավարութիւնը Ձէյթունցիներէն սկսած ըլլալով խաւի պահանջել այն յետեւալ տուրքերը. զորս վերջին ապստամբութենէն ետքը Սուլթանը յանձն առած էր Ձէյթունցոց բաշխել: Պոլսոյ մեծ պետութեանց ներկայացուցիչները խիստ ծանուցագրով մը յիշեցուցեր են անոր իր ստորագրած յանձնարութիւնը:

Թ Ո Ւ Ս Ի Ա

Պաթուժի ամենէն կարեւոր փոզոցին մէջ սոսկալի պայթում մը տեղի ունեցեր է: Ամբողջ փոզոցը իր շրջականներով քար ու քանդ եղեր է: Կը կարծուի որ քարիւղի ստորերկրայ ճամ

բաներէն մէկուն բռնկելէն յառաջ եկած է այս պայթումը:

Ամբողջ քաղաքը ամայացած է յիջառը խիստ մեծ:

— Ռուսիոյ ներքին գործոց նախարարութեան պազորական բաժնին տեսուչը երկրին այլիայլ նահանգներուն մէջ պտոյտի մը ձեռնարկած է, նպատակ ունենալով մօակէն ուսումնասիրել թէ ի՞նչ պայմաններու մէջ կը գրտնուին ուս թերթերէ:

Օգուտ քաղելով այս առիթէն, բազմաթիւ լրագրագետներ յիշատակագիր մը կը կը պատրաստեն ներկայացնելու համար իշխանին, գանդատ յայտնելով այն ծանր պայմաններուն մասին, որոնց ենթարկած է ուս մամուլը գրաքննութեան կողմէ. և պիտի խնդրեն գաւառական մամուլի օրէնքին վերաքննութիւնը:

Գ Ե Ր Մ Ա Ն Ի Ա

Հանօվրի մէջ, անցեալ շաբթու սարսափ մը տիրեր է: Բոլոր գիւղացիներ հազարներով յարձակեր են Խնայողական սնտուկներու պաշտօնատան վրայ, իրենց յանձնած դրամները գանձելու համար: Ոստիկանութիւնը զուր փորձեր ըրեր է այս խուժումը արգիլելու, քաղաքագետը ատենախօսութիւն մը ըրեր է հանդարտեցնելու համար ամբողջը, բայց անիկա կրկին իր յարձակումը շարունակեր է: Վերջապէս հարկ եղեր է որ Խնայողական սնտուկը, Հանօվրի գլխ. դրամատուներուն օգնութեամբ ամենուն ալ դրամները յանձնէ:

Ս Պ Ա Ն Ի Ա

Անցեալ սեպտեմբերին Մատրիտի մէջ երեսն եկած էր Պանք տը Ֆրանսի թղթագրամներ կնդծում մը: Ենորհիւ Սպանիական և Ֆրանսական ոստիկանութեան ջանքերուն, այսօր այդ գրամանին քննելով, թուով 40 հոգի ամբողջովին ձերբակալուեր են:

— Պարլեմոնի մէջ ներկայացուեր է կրօնաւորի մը իջրած մէկ թատերախաղը, որ ճիշու թիւներու դէմ սոսկալի յարձակում մը կը պարունակէր: Ժողովուրդը չափազանց ոգևորութիւն ցոյց տուեր է և բազմաթիւ անգամներ պահանջեր է որ հեղինակը բեմ գայ: Ելքի ատեն ալ համակրական ցոյց մը ըրեր է հեղինակին: Կառավարութիւնը Մատրիտի մէջ արգիլեր է հակակղերական թատերգութեան մը ներկայացումը:

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ

Պրէմէրստօրֆի անգլիական չորքերը սփայուեր են իրենց դիրքերը թողուլ և ետ նահանջել, Հարաէն եկած բաւական

կարևոր Գօէր ուժեր սաստիկ յարձակեր են անգլիական ձիւտորներու վրայ և զայնս ստիպեր են մինչեւ Լամպօլօ նահանջել, Պրէմէրստօրֆէն 16 փարսախ հեռաւորութեամբ:

— Լուր կը պատի թէ Լօրտ Իրլանդի յառաջիկայ օգոստոսին պիտի թողու հարաւ. Ափրիկէի անգլ. զօրաց վերին հրամատարութեան պաշտօնը և Անգլիա պիտի վերագառնայ, ուր հինգ ամիս — չենալով պիտի մեկնի Հնդկաստան նոյն պաշտօնով: Իրեն յաջորդ կը կարծուի զօրավար Պինտըն-Պլուտ:

Յ Ո Ւ Ն Ա Ս Տ Ա Ն

Աթէնքի մէջ յանձնախումբ մը կազմուեր է նպատակ ունենալով Կ. Պօլսոյ վերջին կայսեր Կոստանդին Պալէօլոկի յիշատակին արձան մը կանգնելու:

Կրետական խորհրդարանը իր մայր հայրենիքին հետ ունեցած կապը ցուցնելու համար 10.000 տրախմի գումար մը քուէարկեր է նմանապէս Պօլսոյ յոյն քաղթականութիւնը մեծամեծ գումարներ արձանագրուեր է:

Թ Ո Ւ Մ Ա Ն Ի Ա

Ռուսմանիոյ սահմանազխի գաւառներուն մէջ Պուլկար գործակալներ երեսն ելած ըլլալով, որոնք Ռուսմանապատկառները կը հրաւիրեն Պուլկարիս գաղթել մեկնող իսլամներուն տեղը լեցնելու համար, ներքին գործոց նախարարը կարգ մը միջոցներ ձեռք առեր է այս անպատեհութեան տալքն սունելու համար:

ԱԶԳ

Ռուսմանական խորհրդէն վկայեալ և Պուլկարական կրթական նախարարութենէ վաւերացեալ փորձառու դաստիարակ ուսուցիչ մը պատրաստ է Պուլկարիոյ և արտասահմանի աղգային վարժարանաց մէջ պաշտօն ստանձնել: Մանրամասնութեանց և բանակցութեանց համար դիմել հետեւեալ հասցէին:

ԱՐՄԵՆԱԿ Ե. ՀԱՄԱՄԱՃԵՆՆ Պուլկարիս Սլիվէն

Ա. Չ. Գ.

Կը ծախուի 1896ին փրար. 2ին իշխան Պօրիտի մկրտութեան ասթիւտպուած գործածուած նամակագրօշմներ 1—5—15—25 սանդիմ:

Գիմել ՄԵՍՐՈՊ ՄՈՒՐՍՏԵԱՆ Վանա

Отговорникъ:  
Мурадъ-Браносянъ  
Печ. Взаимность — Варна